ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Քաղաքացիական գործ թիվ ***ԵԴ/6516/02/24***

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Աննա Շիլաջյանի

2025 թվականի օգոստոսի 22-ին քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) ուսումնասիրելով թիվ ԵԴ2/6516/02/25 քաղաքացիական գործը,

Պ Ա Ր Զ Ե Տ

«Ագաստ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. օգոստոսի 7-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 08.07.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր Գ.Վարդանյան) 16.08.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և գործով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2024թ. սեպտեմբերի 20-ը:

Դատարանի (դատավոր Գ.Վարդանյան) 20.09.2024 թվականի վճռով վճռվել է. «Ագաստ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 08.07.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել: (...):

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.05.2025 թվականի որոշմամբ որոշվել է. Վերաքննիչ բողոքը բավարարել: Թիվ ԵԴ2/6516/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 20.09.2024 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ սույն որոշմամբ նշված ծավալով նոր քննության: (...) :

Թիվ ԵԴ2/6516/02/25 քաղաքացիական գործը 18.08.2025 թվականին ժամը 21:15-ին էլեկտրոնային դատավարության համակարգի մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Ծիլաջյանին:

Հաշվի առնելով, որ այդ պահին աշխատանքային ժամն ավարտված է եղել, Համակարգում հասանելի դառնալու պահ է համարվում 19.08.2025 թվականը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Գործը վարույթ ընդունելու մասին որոշումը ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Նույն օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով:

Գործի նոր քննության ժամանակ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները պարտադիր են գործը քննող դատարանի համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև գործի նոր քննությունը գործով հաստատված փաստերը գործի նոր քննության ժամանակ պարտադիր են դատարանի համար, բացառությամբ գործն ամբողջ ծավալով քննելու դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ 12.09.2024 թվականին հայցվորի կողմից միջնորդություն է ներկայացվել գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, Դատարանը գտնում է, որ որ պետք է գործը քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27-րդ, 57-րդ գլխի սահմանված առանձնահատկություններով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/6516/02/24 քաղաքացիական գործն ընդունել վարույթ և և հրավիրել նախնական դատական նիստ՝ **2025 թվականի սեպտեմբերի 29-ին, ժամը 09:00-ին**, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում ***(Արաբկիր նստավայր, ք. Երևան, Հ. Ներսիսյան 10)***:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա

չէ բողոքարկման:

Դատավոր՝ Աննա Շիլաջյան Digitally signed by SHILAJYAN ANNA

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am